ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 նոյեմբերի 2025թ. **N 70-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 20-ի «Թեկնածուներին, լիազոր ներկայացուցիչներին, վստահված անձանց, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին, մասնագետին, աջակցման կենտրոնի մասնագետին, պատգամավորին, համայնքի ղեկավարին, ավագանու անդամին տրվող վկայականների ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 144-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման (այսուհետ՝ Որոշում)՝

1) վերնագիրը «ավագանու անդամին» բառերից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետով.

«12) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի վկայականի ձևը՝ համաձայն N 12 հավելվածի:»:

2. Որոշումը լրացնել նոր՝ N 12 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. նոյեմբերի 14-ի N 70-Ա որոշման
«Հավելված N 12
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. մայիսի 20-ի N 22-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԿԱՅԱԿԱՆ

_____
Նշվում է ընտրության անվանումը

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

_____
անուն, ազգանուն, հայրանուն

ԿԸՀ նախագահ _____
Կ.Տ.

Տրված է « օր » ամիս տարեթիվ

Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում

»: